

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՏ ՀՈՒՆՁՔԻ ՎԱՍՏԱԿՈՎ

(ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս էդ. Բ. Աղայանի ծննդյան 70-ամյակը)

ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ էդուարդ Բագրատի Աղայանը յոթանասուն տարեկան է։ Մշտագրադ, իրենց ու աշխարհի գործերով տարված մարդկանց պես Աղայանի ջահելությունն էլ, կարծես, շատ արագ անցավ։ Թողնելով ջահելության ու ժամանակի արագ անցման ակսոսանքի այս ակարումները՝ անմիջապես ասենք, որ գիտնականի ապրած կյանքը ոչ թե ժամանակի տեղդրությամբ, այլ այդ ընթացքում ստեղծած գիտական վաստակի հունձքով է չափվում։ Իսկ Աղայանը հայագիտության առատ հունձքի վաստակով բեռնավորված գիտնական է։

1933 թ. ավարտելով Մեղրու միջնակարգ դպրոցը՝ Աղայանն ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետը։ 1938 թ. ավարտեց համալսարանը՝ արդեն լեզվաբան հայագետի համբավ ձեռք բերած։ Դեռ այն ժամանակ ասում էին Աղայանը լեզվաբան է ծնվել։ Ինչ-որ բանի համար ծնված է լինում ամեն մարդ, բայց դժվարն ու կարևորը այդպիսին դառնալն է։ Աշակերտելով XX դ. մեծանուն հայագետներ Հր. Աճառյանին, Մ. Աբեղյանին, Հ. Մանանդյանին, Ա. Տերտերյանին, Գր. Ղափանցյանին՝ Աղայանն իր բնածին տաղանդի ու աշխատասիրության շնորհիվ դեռևս ուսանողական տարիներին ձեռք բերեց արևելյան ու եվրոպական լեզուների, հայոց լեզվի ու լեզվաբանության, համեմատական հայագիտության, բանասիրության ու պատմության խոր ու կայուն գիտելիքներ։ Հր. Աճառյանի ամենատես ու հոգատար աչքը տեսավ ու այն ժամանակի ուսանողության բազում արժանավորներից ընտրեց Աղայանին։

Երկու տարին բավարարելով տաղանդավոր լեզվաբանին, որպեսզի ավարտի ասպիրանտուրան և 1941 թ. պաշտպանի թեկնածուական դիսերտացիա՝ նրա «Քննություն Մեղրու բարբառի» դիսերտացիոն աշխատանքը լույս տեսավ համալսարանի «Գիտական աշխատությունների» ժողովածուում, Հր. Աճառյանի «Քննություն Պոլսահայ բարբառի» աշխատության հետ միասին, որը խորհրդանշում էր երկու բան. նախ որ Աճառյանը վերացնում էր հայագիտության, մասնավորապես հայ բարբառագիտության մենագրային ուսումնասիրության իր մենաշնորհը և ապա՝ հայագիտության ասպարեզ էր մտնում մի երիտասարդ լեզվաբան, որը Աճառյանի հայագիտական մեծ գործի շարունակողը պետք է դառնար։ Ուսուցիչը չսխալվեց։ Ոչ այլ ոք, քան Աղայանը միայն կարող էր ազատորեն մուտք գործել գիտական այն ոլորտները,



ուր թափանցում էր գիտական սահմաններ չճանաչող նրա ուսուցչի միտքը: Լավագույն ապացույցը այս մտքի՝ Հր. Աճառյանի հետմահու լրացվող, խրմ-րագրվող ու հրատարակվող պատկառազդու հատորները, որոնք պրոֆ. Աղա-յանի գիտական հմտության, իմացության ու բարեխղճության առհավատչյալն են, այլև՝ սեփական վաստակի մասը: Իր գիտական գործունեության հետագա տարիներին էլ էդ. Աղայանը հաճախ անդրադառնում է հայ բարբառագիտու-թյանը՝ տարբեր ծավալի բարբառագիտական ուսումնասիրություններում և հայագիտական այլ բնույթի գործերում լուսաբանելով հայ բարբառների ծագ-ման, գոական լեզվի տարբեր փուլերի ու բարբառների փոխհարաբերության, բարբառների պատմական հնչույթաբանության, ձևաբանության, բառագի-տության և ընդհանրապես պատմական բարբառագիտության շատ կարևոր հարցեր: Գիտության թեկնածու դառնալուց ընդամենը չորս տարի անց Շևույ լեզվաբանության պատմություն» մեծածավալ աշխատության մեջ էդ. Աղա-յանը պաշտպանեց դոկտորական դիսերտացիա, և երեսունի սեմով նոր անցած երիտասարդը դարձավ գիտության դոկտոր, շուտով նրան շնորհ-վեց նաև պրոֆեսորի գիտական կոչում: Աղայանն արդեն ավելի քան 20 մենագրությունների և մի քանի տասնյակ գիտական մեծ ու փոքր ուսում-նասիրությունների հեղինակ է: Նրա «Հայ լեզվաբանության պատմու-թյուն» երկհատորյա աշխատությունը շուրջ 1600 տարվա հայերենագիտակա-ն գրականության լեզվաբանական վերլուծությունն է: Ի պատիվ հեղինակի պի-տին աչկու, ու նա մոտ չորս տասնամյակ առաջ, բոլորովին երիտասարդ տա-րիքում կարողացել է հաղթահարել ոչ միայն նյութի ընդգրկման ու բազմա-լեզվության, այլև տեսական-մեթոդոլոգիական մի շարք դժվարություններ և հավասարապես դիտական բարձրարժեք խոսք է ասել այդ մեծ ժամանակա-հատվածի թե՛ հայ, թե՛ այլազգի բոլոր հայագետների մասին:

Սկսած 1940-ական թվականների վերջերից՝ էդ. Աղայանը հայագիտու-թյանը զուգահեռ զբաղվում է նաև ընդհանուր լեզվաբանության հարցերով: Նրա «Լեզվաբանության ներածություն» բուհական դասագիրքը, որպես ազգա-յին հանրապետություններում ստեղծված լավագույններից մեկը, թարգման-ված է նաև ռուսերեն: Այս և Հայաստանում ու նրա սահմաններից դուրս այլ լեզուներով նրա հրատարակած ուսումնասիրությունների մեջ Աղայանը ներ-կայանում է որպես լեզվագիտությունը մշտապես առաջ մղող գիտնական: Նա մեծանում լեզվաբանական նոր ուղղություններ ու մեթոդներ հիմնադրող ու զարգացնող քերից մեկն է: Հետևելով ու զարգացնելով կառուցվածքային, կիրառական, հանդակլեզվաբանական ուղղությունները՝ իր «Լեզվաբանության ներածություն», «Գրաբարի քերականություն», «Ժամանակակից հայերենի հո-լովումը և խոնարհումը», «Լեզվի ծագումը և զարգացումը», «Լեզուն իբրև համակարգ և կառուցվածք» և այլ աշխատություններում Աղայանը նոր խոսք է ասել լեզվի՝ որպես հասարակական երևույթի, նրա կառուցվածքի ու զար-գացման օրինաչափությունների, նրա առանձին բաղադրիչների՝ հնչույթի ու ձևույթի, լեզվական մակարդակների, քերականական կարգերի և բազմաթիվ այլ լեզվաբանական կարևոր խնդիրների վերաբերյալ: Այս ամենի քննության մեջ էլ Աղայանը շարունակում է մնալ հայկաբան: Գտնվելով լեզվաբանու-թյան առաջավոր դիրքերում՝ նա հաջողությամբ լուծում է նաև հայոց լեզվի ու նրա պատմության տեսական ու գործնական հարցերը: Սկսած հայերենի ծագման խնդրից մինչև մայրենի բարբառ և արդի հայերենի կառուցվածք ու դպրոցական դասագիրք,— այդպիսին են գիտնականի հետաքրքրասիրության սահմանները: Հայերենի ծագման, մեսրոպյան այբուբենի ստեղծման պատ-մության, գրական հայերենի տարբեր փուլերի, սրանց ներքին կապի ու ան-ցումների, սրանց ու հայ բարբառների փոխհարաբերության, հայերենի կա-ռուցվածքի տարբեր կողմերի բնութագրումների՝ հայոց լեզվի պատմության ու հայերենի համեմատական քերականության բազմազան հարցերի մեջ չկա քիչ թե շատ ուշագրավ խնդիր, որի պարզաբանման մեջ իր գիտական ավանդը ներմուծած չլինի էդ. Աղայանը: Եվ սրանցից շատ-շատերի քննությունը՝ մե-նագրական ուսումնասիրություններում:

Պրոֆ. Աղայանի գիտական վաստակի մեջ ծանրակշիռ տեղ ունեն հայ-
րենի բառագիտության և բառարանագրության բաժինները: Հայերենի բառա-
լին մի շարք ստուգաբանությունների, տերմինաբանությանն ու բառակազմու-
թյանը նվիրված առանձին ուսումնասիրություններին, մենագրություններում
բառագիտությանը նվիրված գլուխներին վերջերս ավելացավ բուհական ձեռ-
նարկի բառագիտության բաժինը, որը հայերենի բառապաշարի տեսական նոր
քննությունն է: Այստեղ նոր խոսք է ասվում մեզանում բառագիտության դեռևս
չմշակված բաժնի՝ իմաստաբանության մեջ:

էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը», որ լույս տե-
սավ 1970-ական թվականներին երկու հատորով, գիտնականի տասնամյակ-
ների քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Մոտ 135,600 բառ և 11 հազար
դարձվածք պարունակող այս բառարանը հայ բառարանագրության խոշորա-
գույն նվաճումներից է: Օգտագործելով հայ բառարանագիտության հարուստ
փորձը, նրանում կուտակված լեզվական փաստական նյութը, դրան ավելաց-
նելով ժամանակակից հայերենի մեջ վերջին մոտ կես դարի ընթացքում տե-
ղի ունեցած բառապաշարային փոփոխություններն ու կուտակումները, որոնք
չէին ենթարկված բառարանային մշակման, պրոֆ. Աղայանը արդի հայերենի
բառապաշարը ներկայացրել է իր իմաստային կառուցվածքի, քերականական
անհրաժեշտ հատկանիշների, դարձվածքային միավորների գիտական ճշգրիտ
ու փաստարկված համակարգմամբ ու նկարագրությամբ:

էդ. Աղայանը բուհական և դպրոցական մի քանի դասագրքերի հեղինակ է:
Դասական ու ժամանակակից արևելյան լեզուների իմացությունը հնարավոր-
ություն է տալիս Աղայանին գիտական բեղմնավոր գործունեություն ծավա-
լելու նաև արևելագիտության բնագավառում: Այս ասպարեզում արժեքավոր
են նրա ոչ միայն համեմատական ուսումնասիրությունները հայերենի ու
պարսկերենի աղբյուրների վերաբերյալ, այլև՝ բուն պարսկերենի ու պարսկա-
կան գրականության վերաբերյալ:

Մոտ քառասունհինգ տարի շարունակ պրոֆ. Աղայանը իր բազմակողմա-
նի գիտելիքները սիրով ու նվիրումով հաղորդում է իր ուսանող և ասպիրանտ
սաներին: Նա հմայքով ու համբավավոր դասախոս է:

էդ. Աղայանը գիտության ու բարձրագույն կրթության ճանաչված կազ-
մակերպիչ ու ղեկավար է: Նրա ղեկավարությամբ մի քանի տասնյակ թեկնա-
ծուական և մի շարք դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանվել: Լուսա-
վորության մինիստրության բուհերի վարչության պետի, ԳԱ լեզվի ինստի-
տուտի դիրեկտորի տեղակալի, բաժնի վարիչի, համալսարանի պրոռեկտորի,
դեկանի, ամբիոնի վարիչի, հայագիտական կենտրոնի գիտական ղեկավարի և
այլ պաշտոններում Աղայանը միշտ եղել է և կա որպես գիտնական ղեկավար:
Քաղաքացիական ուսանելի նկարագիր ունեցող մանկավարժ գիտնական է
էդ. Աղայանը՝ բարու և գեղեցիկի սիրահար, պարզ ու մարդամոտ, պայծառ
ու անմիջական: Ի հատուցումն նրա ծառայությունների մեր ժողովուրդն ու
կառավարությունը Աղայանին շնորհել են այն բոլոր գիտական կոչումներն ու
տիտղոսները, որոնք տրվում են գիտության մարդկանց մեր հանրապետությու-
նում: Պրոֆ. Աղայանը նաև ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ է, ՀՍՍՀ
Գերագույն սովետի դեպուտատ: Վերջերս ՍՍՀՄ Գերագույն սովետի հրամա-
նագրով Աղայանը պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքա-
նշանով:

Երկար տարիների բեղմնավոր կյանք պրոֆ. Աղայանին՝ բնությունից ու
մարդուց առատորեն ստացածը մարդուն ու բնությանը վերադարձնելու հա-
մար:

ՀՈՎՀԱՆԵՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Բաճափրախե գիտությունների թեկնածու